Ardshinbank

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2024 թվականի ապրիլի 29-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2024-2-2 Լ որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 61 092 229 000 (վաթսունմեկ միլիարդ իննսուներկու միլիոն երկու հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ՓԲԸ զուտ շահույթը (հարկերի նվազեցումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

1) 3 054 611 000 (երեք միլիարդ հիսունչորս միլիոն վեց հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամի չափով, որը կազմում է 61 092 229 000 (վաթսունմեկ միլիարդ իննսուներկու միլիոն երկու հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում,

2) 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարել՝ հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 9[1].3. կետի 1-ին ենթակետի:

Սույն ենթակետով սահմանված տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել մինչև 2024 թվականի մայիսի 31-ը ներառյալ՝ համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ բանկային հաշվին փոխանցելու միջոցով,

3) մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված շահութաբաժինները վճարել Բանկի այն «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը, որն ընդգրկվել է Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի ռեեստրում՝ 2024 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: